№ 22 ԹԷՀԵՐԱՆ ՇԱԲԱԹ 28 ՄԱՅԻՍ 1894 № 22

ԱԹԱՋԻՆ ՏԱՐԻ

ՇԱՒԻՂ

ԱԹԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„ՇԱՒԻՂԸ“ ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԱՐ

«ՇԱՒԻՂԻ» Տարկլան գինը 10 դրան, կէս տարուանը 6 դրան: Առանձին հաւարները 5 շահի. Արտասահմանում տարեկան 8 ֆրանկ կամ 3 ռուբլի, կէս տարուանը 5 ֆր. կամ 2 ռուբլի: Թէհրանում գրւում են միմիայն խմբագրատան մէջ: Մեր հասցէն. Téhéran Rédaction CHAVIGH.

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է առաւօտեան 8—4 ժամը: Կիրակէ եւ տօն օրերը 10—2 ժամը: Յայտարարութիւն ընդունւում է ամէն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 1 շահի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հասարակական բարեգործութիւնը միջնադարում. Նամակ Դավրէժից. Նամակներ Ֆոխանգրոմեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ՄԵՋՆՈՒՄ

I.

Հասարակութեան բարոյական զարգացման, պարտաճանաչութեան չափն իմանալու ամենայարմար միջոցներից մէկն էլ բարեգործութիւնն է, թէ որքան կրթուած, զարգացած է մի հասարակութիւն մտաւորապէս—իմանալու համար, քննութեան են ենթարկում նոյն հասարակութեան ջանքերն ու վերաբերմունքը դէպի իւր հանրային կազմակերպութիւնները. ինչ բարոյական ընդհանուր սկզբունքներով է ղեկավարւում, մի ժողովուրդ կամ հասարակութիւն, իւր ընկերական—մարդկային գործառնութիւնների մէջ, ինչպիսի զգացմունքներ է իրայրել նա ընդհանուր մարդկային առաջադիմական ոգուց, և որքան ընդունակ է նա իւր սնեցածը ըստ հարկին և յարմարութեան գործադրելու կեանքի մէջ,—ահա հասարակական այդ բարոյա-ընկերական դրամադրութիւնը չարժելու համար, քննում են նդրպ անցեալ ու ներկայ բարոյական կեանքն ու բարեգործութիւնը:

Մեր խորին համոզմունքով կարծում ենք, թէ մարդկութիւնը բարոյապէս և մտաւորապէս զարգանում է միայն այն ժամանակ, երբ ըստ ամենայնի ապահովւած է տնտեսապէս: Հետևապէս. անհատի, ընտանիքի, հասարակութեան, ազգի և, վերջապէս, ընդհանուր մարդկութեան բարոյա-մտաւորական գործը պայմանաւորւում է նոցա տնտեսական կեանքով: Կառուցէք ամենահոյակապ համալսարաններ, ակադեմիաներ, դպրոցներ, հիմնեցէք թանգարաններ, ընթերցարան-գրադարաններ, կլուբներ և այլն և այլն. այդ բոլորը գրոշ չարժեն մէկի համար, երբ նորա ստամոքսը դատարկ է, երբ նա մերկ և բորիկ՝ ամբողջ մարմնով դողում է, նա դեռ պէտք է մտածէ յագուրդ տալ իւր ֆիզիկական բնական պահանջներին, և յետոյ՝ հոգեկանին: Եւ իսկապէս, ինչ միտք ունին գիտութիւնները, գեղարուեստները, երբ մարդս սովից մեռնում է. ինչ նշանակութիւն ունին կրօնական, բարոյակրթական, կենցաղագիտական և ուրիշ այդ կարգի քարոզները, էլ թեղեր մի քանի ժամից յետոյ պէտք է մտնէ գերեզման: Չէ որ այդ բոլորը մարդու համար է, և ոչ թէ մարդը դոցա համար:

Թէ ինչ բազմակողմանի պատճառների, հանգամանքների հետևանք և արդիւնք են հասարակական կամ անհատական աղէտները—մենք չենք կամենում այդ և այդպիսի հարցերը շօշափել, այլ մեզ հետաքրքրում է ներկայ իրողութիւնը, որը և պահանջում է օգնութիւն: Օգնել մեր ընկերին—այդ մեր սրբազան պարտաւորութիւնն է, դա մարդկային-ընկերական պահանջ է. առանց այդ պարտաւորութեան լիապէս կատարուելուն, առանց այդ ընկերական պահանջի գոհացման՝ մարդկութիւնը չէր կարող ներկայ դրութեան հասնել և մենք մեզ թոյլ ենք տալիս ասելու աւելին, առանց այդ ընկերասիրական բնական ոգուն՝ մարդկութիւնը չէր կարող գոյութիւն ունենալ: Հասարակական, ընկերային, մարդկային համերաշխական, գաղափարի և ոգու բացարձակ տիրապետութիւն, հիմնուած անհատական իրաւունքների կատարեալ բաշխման վերայ,— ահա այն հիմքը, որի վերայ կանգնած է մարդկութեան շէնքը:

II.

Հասարակութիւնը բաղկացած է ընտանիքներից, իսկ վերջինը՝ անհատներից. ընտանիքի իւրաքանչիւր անդամը, իւրաքանչիւր անհատ, վայելում է զանազան իրաւունքներ և արտօնութիւններ այդ քիչ-տանեկան կազմակերպութեան մէջ, նա ունի իւր առանձին, սեպհական պահանջները և պարտաւորութիւնները պետրջանի մէջ:

Ընտանիքից անցնելով հասարակութեան, ազգին և ընդհանուր մարդկութեան՝ մենք միևնոյն երևոյթին ենք հանդիպում: Աւելի շօշափելի կերպով ցոյց տալու համար վերցնենք մի օրինակ ընտանիքից. այստեղ հայրը զբաղուած է արտաքին աշխատանքով, մայրը ներքին—տնային գործերով, իսկ զաւակները, դիցուք կրթութեամբ, հոր պարտականութիւնն է հոգալ ընտանիքի նիւթական և բարոյական բոլոր կարիքների մասին, որքան դրանից իրան բաժին է ընկնում, մօր պարտաւորութիւնն է նոյնպէս կատարել իրան բաժին ընկած պարտքերը, այդպէս են վարւում և ընտանիքի միւս անդամները—զաւակները: Այդ, այժմ պարզ է, որ այս բոլոր ընտանեկան յարաբերութիւնները հիմնուած են լիակ փոխադարձ համերաշխութեան և իրաւունքների վայելման պայմանների վերայ, այդ բնական անխուսափելի պայմանների շնորհիւն է, որ այդ մի քանի անհատներն իրար մօտ գալով՝ կազմում են մի ընտանիք, որոշ տնհատական իրաւունքներով:

Հէնց այդ միևնոյն համերաշխական, ընկերային ոգու զօրութեամբ, պէտք է բացատրել և հասարակութեան կազմակերպութիւնը:

Ինչպէս որ ընտանեկան կազմակերպութիւնը պարտաւորեցնում է նորա իւրաքանչիւր անդամին աշխատել յօգուտ ընտանիքի, որովհետև վերջինս նորան

կեանք, անունդ, բարոյական ամեն սեռակ վայելչանք է ընձեռում, պահպանելի է նորա գոյութիւնը, առանց որոնց նա չէր կարող ապրել. նոյնպէս և հասարակական կեանքի կազմակերպութիւնը, նորա անսայթաք առաջադիմութիւնը և բարօրութիւնը պահանջում է անհատից, աշխատել ընկերութեան համար։ Այսինքն պէտք է ասել և մի ազգի վերաբերմամբ։

Այսպէսի անխոտոտան, բարոյական և ֆիզիքական անխզելի կապերով սերտ կապուած լինելով միմիանց հետ, գտնուելով մի և նոյն հասարակական պայմանների մէջ, շարունակ այդ հասարակութիւնից զանազան բարիքներ վայելելու անխուսափելի դիրքի մէջ լինելով. մենք, բնականաբար, պարտաւորուում ենք անքուն հոգել մեզ կեանք տուող հասարակութեան բարգաւաճութեան գործին։ Որովհետև անհատի երջանկութիւնը պայմանաւորուում է հասարակութեան երջանկութեամբ և փոխադարձաբար. վասնորոյ, այդ երկու մարմիններից, օրգաններից մէկնումէկի խանգարումն առաջացնում է հասարակական ընդհանուր հիւանդութիւն և եթէ անհատը, իւր առողջ ժամանակ կազմում է հասարակութեան երջանկութեան ֆակտորներից մէկը, որի ներկայութիւնն անհրաժեշտ է, ուրեմն նրա հիւանդութիւնը կամ վնասաբեր վարակիչ դրութեան մէջ լինելը պարտաւորեցնում է հասարակութիւնը դարմանել նորան այդ անառողջ անդամին։

III.

Խօսելով բարեգործական ոգու մասին, մենք բնաւ ի նկատի չունենք մասնաւորութիւններ. Դալ մենք վերցնում ենք ընդհանրութեան բարոյական դրամագրութիւնը, նորա մարդասիրական զգացումների չափն ու աստիճանը։

Հաստատ կարելի է ասել, որ մեզանում չը կայ հասարակական բարեգործութիւն, ընդարձակ առումով։ Յանկարծ երևան է գալիս խօլերայ. սարսափելի սխտը աջ ու ձախ սկսում է անխտիր կլլոտել մարդկային անհատներ. ինչ է անում հասարակութիւնն այդպիսի օրհասական դէպքերում, կարողները հեռանում են ճարակուած վայրերից դէպի լեռնային գիւղերը իսկ հասարակ ժողովուրդը գոյութիւն չունի նոցա համար, նոքա թողնում են նրան անգութ սխտի ճիրանների մէջ։ Անցնում է խօլերան. բուրժուան հանգիստ, անվրդով վերադառնում է իւր տեղը, բոլորովին սառն որտով նա վերսկսում է իւր զբաղմունքները։ Բայց աւաղ, անցնում է մի քանի ամիս և պէտ մի դժոխային ձայն սարսափելի ցնցման է ենթարկում ամբողջ հասարակութիւնը։—Սով է։

Խօլերայի պատճառած ահագին վնասները լրումն են ստանում այս տաժանաղէտով։ Հաց չը կայ, ինչո՞ւ, որովհետև աշխատաւոր ձեռքերը զոհ գնացին սոսկալի համաճարակին, հարիւրաւոր ընտանիքներ զրկուեցան իրանց նեցուկներից և երկրի արդիւնաբերութեան ընթացքը կանգ առաւ։ Այս բոլորն այնպիսի անխզելի, սերտ կապերով կապուած են միմիանց հետ, որ մէկը հեռանում է միւսին։ Խօլերա, սով, գաղթականութիւն և պանդխտութիւն, ահա այն չարիքները, որոնց բազմաճիւղ հետևանքները հարիւրաւոր անբուժելի հարուածներ են տալիս մարդկութեան. դրանք կասեցնում են մարդկութեան տնտեսական, բարոյական և մտաւորական կեանքի ընթացքն ու առաջադիմութիւնը, վտանգում է հասարակական զարգացման, լուսաւորութեան գործը դրանց ազդեցութեան ներքոյ։ Չարիքը միշտ չարիք է ծնում։ Անտարբեր, գերբնական կեանքով ապրող, լոկ իւր անձնական միտումներին ծառայող, բարձր, ազնուրիչ իդէալներից և ձգտումներից զուրկ անհատը, կամ հասարակութիւնը միշտ կը տուժէ. այդպիսին անարժան է մարդ կոչուելու։

Ահա 5—6 ամիս է, որ մեր դրացի երկու պետութիւնների մէջ հեռագրեան ծաւալուում, ընդարձակուում է սովը. ամեն օր հայ թէ օտար ազգի լրագրերում տպուում են տասնեակ սրտաճմլիկ նկարագրութիւններ, դէպքեր ահռելի աղէտի մասին. ներկայացումներ, հանգանակութիւններ, նուիրատուութիւններ, ահա այն միջոցները, որոնցով շտապում են օգնութեան հասնել հազարաւոր սովատանջ ընտանիքների, ոչնչել նրանց աղեկնուար վիճակը, բարձրացնել այդ մարդկային անհատներին, լինին դոքա հոգի թուրք, քիւրդ թէ մի այլ ազգ, իսկ մեր անդգամ հասարակութիւնը թաղուած իւր եսակենի մութին խորը թմբիրութեան մէջ, ականջները խլացրել, աչքերը փակել է։ Նա չի տեսնում այն տենդային գործունէութիւնը, որով ուրիշներն աշխատում են կատարել իրանց մարդկային պարտքը։ Թ.

Դավրէժ 12 մայիսի 1894

ՆԱՄԱԿ ԴԱՎՐԷԺԻՑ

12 մայիսի 1884

Մայիս 6-ին Աբրամեան ուսումնարանի թատրոնական սրահում տեղի ունեցաւ մի ներկայացում, հովանաւորութեամբ ռուսաց հիւպատոսի այրեաջ, նոյն ուսումնարանի օգտին. խաղացին ֆրանսերէն լեզուով. խաղացողները բոլորն էլ եւրոպացիներ էին։

Ներկայ էր թագաժառանգը իւր չորս որդիներով և իւր բարձրաստիճան պաշտօնեաներով։ Նորին բարձրութեանը ընդունեց առաջնորդը բակի մուտքում հոգաբարձական և ուսուցչական խմբի հետ միասին, որտեղ Աբրամեան ուսումնարանի երգեցիկ խումբը ձայնագրութեան ուսուցչի առաջնորդութեամբ՝ երգեցին „Մեծափառ արքայն մեր“ երգը միսչև երգի վերջանալը նորին բարձրութիւնը սպասեց։ Թագաժառանգի համար պատրաստուած էր մի յատուկ սենեակ՝ շատ շքեղ գահաւորութեամբ, որտեղ հանգստանում էր անտրակտերում։ Սրահը և բուֆէտը զարդարուած էին շատ գեղեցիկ ճաշակով. բակում նուագում էր տեղական զինուորական մուզիկան։ Նորին բարձրութիւնը հեռացաւ ներկայացումից և հոգաբարձուներից շատ գոհ։ Ներկայացումից յետոյ բոլոր դերակատարները ընթրեցին բուֆէտում շատ պաշտօնեաների հետ։ Մուտք բացաւում է մօտաւորապէս հազար երեք հարիւր թուման։ Ինչպէս լսում ենք Ռուսաստան ուղարկուած են մօտ 46 տոմսակներ՝ զանազան յայտնի հայ՝ վաճառականների։ Յոյժ ուրախ ենք որ Բերդամեանի ուսումնարանի հոգաբարձունները՝ ստանալով այս կարևոր նախնտը, կը մտածեն վերջապէս մի կանոնաւոր ուսուցչական խումբ կազմել, և վարժարանը դնել բարեկարգ դրութեան մէջ։

Մեր մօտ ամեն նպատակների համար տրւում են ներկայացումներ, իսկ սովեալների համար ոչ, ամեն կողմ սկսուել է հանգանակութիւն, իսկ մեր մէջ խաչսելուց աւելի՝ տասից աւելի ընկերութիւնները ոչինչ չեն ձեռնարկում։ Աղբութիւն քարոզներ, թողէք ձեր եսականութիւնները, կուսակցութիւնները և գործեցէք խղճի մտօք որ չը գատապարտուիք։

Այս օրերս հասաւ Դավրէժ Գիւլման գաւառի կառավարիչ Մէլիք Սարգիսը։ Չը նայելով իւր ծերութեան և աչքերի տկարութեան՝ Մէլիք Սարգիսը դեռ էլի շատ առողջ է և աշխոյժ։ Իւր գա-

ւառի գործերը երեսի վերայ թողած եկել է Դավրէժ բացատրութիւններ տալու այն բոլորի մասին, ինչ որ տարածել են նորա մասին։ Մելիքը արդէն ներկայացել է նորին բարձր սրբազնութեան և մի քանի ուրիշ պաշտօնական անձնաւորութիւնների։ Մելիք Սարգիսը խօսում է ամենքի հետ շատ համարձակ և պահանջում, որ քննուի ինչ որ լսւում է իւր համար և եթէ հաստատուի այն բոլոր առածներից մէկը, ինքը պատրաստ է քարկոծուելու։ Նորա կուսակիցները պահանջում են, որ նա վերադառնայ գաւառը, բայց նա չի համաձայնւում։ Նրա հակառակորդ Ջահանգիրը Մելիքի եղբօր որդին արդէն դուրս է գալիս Ղարադաղում իրրև ըէկ, որին աջակցում է յայտնի վաշխառու Մելիքի քրոջ որդի տէր Սարգիսը, որը թէ այսօր ապրում է, դա էլ Մելիքի շնորհիւն է։ Զուգենալով այս քահանայի արածները լրագրութեան մէջ առնել, խնդրում ենք նորին բարձր սրբազնութեան աջալուրջ ուշադրութիւնը այս քահանայի վերայ։

Այս օրերս սպանուել է Փէյվանում մի հայ, որը գնացել էր Թրքական Հուշ գիւղը կով գնելու. վիրաւորին երկրորդ օրը բերում են իրանց գիւղը Ասրան և ուղարկում տէր Սարգսի յետուից, որ գայ ճաշակեցնէ. տէր Սարգիսը մերժում է, ասելով գնացէք կանչեցէք Մելիքին որ գայ հաղորդի, որովհետև վիրաւորը լինում է Մելիքի կուսակիցներից և մեռնում առանց հաղորդուելու։ Պատճառները յայտնի են։ Դեռ Մելիք Սարգսի հրաժարուիլը հաստատուած չէ, և տեսէք արդէն ինչ է գործւում....։

Մելիք Սարգսի որդիներից մէկը կոչոտուել է իրանց գիւղից մէկ քառորդ ժամ հեռի նոր բէգ Ջահանգիրի հրամանով։

Նորին բարձր սրբազնութեան ուղարկած քննիչին փախցրել է տէր Սարգիսը ինչ—ինչ ինտրիգաներ լարելով։

(Հասօ)

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

ԹԷՀՐԱՆ 25 մայիսի 1894

Մի քանի տարիներից ի վեր է որ հանրօգուտ մի մտադրութիւն մի քանի անձերի մտքում լղացուած է. բայց մենք չունէինք մինչև այժմ մամուլ որ այդ մասին հրապարակաւ խօսէր և փաստաբաններ, և այդ կերպով այդ օգտակար միտքը հասարակութեան մէջ չէր տարածւում և խօսակցութեան առարկայ չէր դառնում, բայց այժմ, որփառք Աստուծոյ ունենք այդ, և կարող ենք մեր մտքերը հասարակաց դատաստանին ենթարկել՝ ես համարձակուեցայ այդ առաջարկը անել մամուլի էջերում։ Ցոյս ունիմ որ Թէհրանի հասարակութիւնը լուրջ ուշադրութիւն կը նուիրէ այդ հարցին և իսկապէս եթէ այդ հանրօգուտ գործը ի գլուխ կայ, Թէհրանի հայերի համար մեծ յառաջադիմութեան մի անուշդղակի պատճառ կը դառնայ։

Թէհրանում մօտաւորապէս 300—350 տուն հայեր կան որոնք շատ ցիրուցան են բնակուած, մի քանի տներ քաղաքիս մի դրան թաղումն են բնակութիւն հաստատել. մի քանիներ միւս դրան թաղում և մի քանիներ շատ անբնակելի թաղում։ Միայն Ղազվինի թաղում կարելի է տեսնել մի քանի հայ տներ միմիանց կից, և այլ ևս ուրիշ ոչ մի թաղում։

Այս ցիրուցան բնակութիւնը ունի իւր շատ մեծ նիւթական վնասները և աւելի ևս՝ իւր բարոյական վատ ազդեցութիւնը մանուկների վերայ, որոնք մի տեղից միւս տեղ երթալու համար պարտաւորուած են ականատես լինել փողոցային շատ անվայել տեսարանների։

Մթթէ լաւագոյն չէր լինի որ այստեղի ամեն հայերը մի թաղի մէջ խմբուած լինէին և միասին ապրէին, ինչպէս Ղ. Զուղայի և Դավրէժի մէջ։

Այժմ մտադրութիւն կայ Դովլաթի թաղում մի նոր եկեղեցի և վարժարան ևս հաստատել որպէս զի այն թաղի բնակիչները ազատուած լինին երկար հեռաւորութեան պատճառով փողոցային ամեն տեսակ տհաճելի տեսարաններից. բայց այդպիսով չեն կարող ազատուած համարուիլ, որովհետև արդէն շատերի համար ճանապարհի հեռաւորութիւնը միևնոյնն է և աւելի վատ է Շահաբադիլազիմ թաղի հասարակութեան համար։ Մթթէ կարծում էք այս անօգուտ չէ. անտարակոյս մեծամասնութիւնը պէտք է պատասխանէ այս։ Մթթէ աւելի լաւ չէր լինի երեք եկեղեցիների, երկու վարժարանների, ընթերցարանների, մի քանի բաղնիքների փոխարէն ունենալ իւրաքանչիւրից մի մի հատ և շատ կանոնաւորը, որով միջոցների մեծ խնայութիւն եղած կը լինէր։

Այո, անկասկած շատերին այս առաջարկը և գաղափարը խորթ և անիրագործելի կը թուի սկզբում, սակայն եթէ ամեն ոք մի քիչ քննէ և թափանցէ խնդրի մէջ, պէտք է տեսնէ որ միասին և մի թաղի մէջ ապրելը ինչ ահագին առաւելութիւններ ունի, և միւս կողմից պէտք է տեսնէ որ արգելքները և դժուարութիւնները անյաղթելի չեն։ Բայց գիտէք շատերը գործելու և այդ անհերքելի կերպով օգտակար առաջարկը իրականացնելու փոխարէն ինչ կասեն. այ և այլ մանր մունր պատճառներ և արգելքներ յառաջ կը բերեն և իրանք իրանց կարդարացնեն ասելով „բարեկամ, գիտես ինչ կայ, հայը միութիւն չունի“, սակայն այդպէս չէ և այդ միանգամայն սխալ խօսք է։ Հայերը կը միանան այդ տեսակ գործերում եթէ միայն անկեղծ և անձնուէր ղեկավարներ և գործիչներ ունենան։ Այդ խուսափողական պատասխանը մի տեսակ պատրուակ է որ մեր մէջ մի սովորական ոճ է դարձած. և երբ տեսնում ենք որ մի գործ մի քիչ զոհողութիւն, դժուարութիւն և աշխատանք է պահանջում իսկոյն այդ խօսքը գնտակի պէս գլորում ենք մէջ տեղ, մի ուրիշը անշուշտ կը գտնուի որ այս գնտակը լետ կը գլորէ և ահա այսպիսով գործը չը սկսած կը խանգարուի և կը չքանայ։ Թող պատուելի ընթերցողը նէրողամիտ գտնուի որ մի քիչ շեղուեցայ նպատակից բայց ցաւալի իրողութիւնը այդպէս է։

Գալով այս խնդրի իրականացմանը՝ այնքան ևս դժուար չէ. այսինքն պէտք է մի ընդհանուր ժողով գումարել բոլոր Թէհրանի հայ հասարակութիւնից կազմակերպուած, ուր այս գործի մասին համաձայնութեամբ ընտրուի մի հոգաբարձութիւն, որ այնուհետև գործը աւելի կը դիւրացնէ։ Մեզ համար մի բան շատ յայտնի և ակներև է. մի թաղի մէջ համախմբուած լինելու օգուտը. գալով դրժուարութիւններին՝ նոքա անյաղթելի չեն, և ձեռնհաս անձերից կազմուած մի յանձնաժողով՝ շատ արգելքներ կարող է բառնալ որոնք այժմ անյաղթելի են թւում։

Ցոյս ունիմ որ Թէհրանի հասարակութիւնը լուրջ ուշադրութիւն կը դարձնէ այդ հարցին, և լրագրի էջերում քննադատութեան առարկայ կը դարձնէ,

Մ. Մ. Գրիգորեան։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Որպէս լսում ենք Վ. Եհափաս. Հալրիկը ի պատասխանի Ազգային Ուսումնասիրաց Ընկերութեան առ Նորին

Վեհափառութիւնը մատուցած մի աղերսագրի, բարեհաճած է մի կոնդակ ուղարկել նոյն ընկերութեան, որ կապ ունի պարսկահայոց ազգային հաստատութեանց և մասնաւորապէս կրթութեան գործի հետ։ Ցանկալի կը լինէր որ յիշեալ ընկերութիւնը „Շաւղի“ էջերում տպել տար Վեհափառի կոնդակը։ „Շաւղի“ համար որ մասնաւորապէս զբաղւում է այդ խնդիրներով, այդ կոնդակը վերին աստիճանի հետաքրքրական կը լինէր։

—

Տաճկաստանի զանազան բոդաքներից ստացուած մասնաւոր նամակներից երևում է որ ասելը այնքան հասել է անելիակալելի սառակութեան, և մարդիկ խումբ խումբ մեռնում են արդէն օգնութեան պակասութիւնից։

—

Ն. Վ. Մօին-ուլ-Մուլք. որդի Ն. Վ. Ամին-էդ-Դովլէի, իւր հօր փոխարէն փոստի նախարար է նշանակուած։

—

Երեք շաբթի օր տեղի ունեցան Հայկազեան օրիորդաց վարժարանի քննութիւնները, և ձեռագործների ցուցումը։ Օրիորդները գեղեցիկ յառաջադիմութիւն ցոյց տուին իրանց առարկաների, մասնաւորապէս թուաբանութեան մէջ։ Երկրորդ դասարանը բաւական բազմաթիւ էր. ցանկալի կը լինէր որ վերջապէս թէհրանցի հայ տիկինները համոզուէին որ միայն կարդալ գրել բաւական չէ աղջիկների համար, այլ թողնէին իւրեանց դուստրերը վարժարանում մինչև նոքա աւարտէին իւրեանց ուսումը, որ այնքան լաւ կերպով են սկսել։

—

Անցեալ շաբաթ օր Թաւրիզի հրապարակի մէջ բացուած նոր փոստատան մէջ տեղի ունեցաւ քաղաքային փոստի բացումը. ներկայութեամբ փոստային նախարար Վ. սեմ. Ամին-էդ-Դովլէի, արդարութեան նախարար Մուշիր-էդ-Դովլէի և այլոց։ Նմանապէս այցելեց նոր փոստատունը Նորին Բարձրութիւն իշխան Նայիբ-Սալթանէն։ Ն. Վ. Վեհափառութիւն Շահը անցնելով այդ օր նոր փոստատան առջևից, իւր կառքը կեցնել տուաւ, և մի քանի տեղեկութիւններ հարցնելուց յետոյ՝ իւր բարձր գոհութիւնը յայտնեց փոստային վարչութեան մէջ բերուած վերջին բարեփոխումների մասին։ Իսկապէս այս վերջին մի քանի ամիսների ընթացքում, շնորհիւ իշխան Վ. ահրամ Պէյ Տատեանի ձեռներէցութեան, որ փոստային վարչութեան մէջ ընդհանուր վերաքննիչ կարգուած է, մեծ փոփոխութիւն է նկատւում։ Քաղաքային փոստի հաստատումը մեծ գիւրութիւն կը տայ թէհրանցիներին, որոնք միմիանցից այնքան հեռաւոր թաղերում են բնակւում։

—

Շնորհակալութեամբ ստացանք „Արաքսի“ 5-րդ տարուայ II. գիրքը։ Մեր հրատարակութիւններին մէջ „Արաքսը“ առաջին տեղն է բռնում տալի գեղեցկութեան, և մանաւանդ նկարների բանչելի արտատպութեան կողմից։ Շատ ուրախալի է „Արարատի“ խմբագրի նախաձեռնութիւնը՝ աշխատել հայ հասարակութեան մէջ մշակել դեկտաբեռեան ճաշակը։ Յոյս ունինք որ հասարակութիւնն էլ իւր կողմից կը քաջալերէ այդ հրատարակութիւնը։

—

Մենք ստացել ենք մի նամակ Դավրէժից Պ. Վ. Միքայէլեան ստորագրութեամբ որ խօսելով „Շաւղի“ 18-րդ համարում տպուած „Լոյս“ ընկերութեան երեկոյթի մասին գրուած յօդուածի վերայ՝ հերքում է մի քանի կէտեր, ի միջի այլոց նոյն յօդուածագրի հետեւեալ գրածը „պատկերների մէջ գլխաւոր տեղն էին բռնում եկեղեցիները. ինչ է նշանակում այդ. մթթէ Եւրոպայում եկեղեցիներից բացի ուրիշ հիմնարկութիւններ չը կան“։ Պ. Միքայէլեան ապացուցանում է որ 50 պատկերներից միայն երեքը եկեղեցի և մէկը մզկիթ էին, մնացորդը դաշտանկարներ Շուէյցարիայից, պալատների արձանների, և այլն պատկերներ։ Նամակը չենք կարող տպել որովհետև վէճի առարկան այնքան հետաքրքիր չէ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—„Նոր-Ֆարիզ“ քաղաքում ենք հետևեալը։ Կ. Պոլսից „Նովոստի“ լրագրին հետևեալն են գրում.—Եօզդատում զինուորական դատարանի հայերի վերաբերմամբ արձակած մահուան դատավճիռները գնդակահարելու համար տրած խոստումը այստեղ ապացոյց է համարւում, որ սուլթանը չի յանկանում գործնական ելք տալ այդ դատավճիռներին այն ձևով, որ դրանք արձակուած են։ Կարծում են, որ սուլթանը նեղում կը չնորհի դատապարտուածներին, և այդ յոյսը լաւ տպաւորութիւն է թողնում հայ համայնքների վերայ։ Եօզդատում դեռ ևս կանգնած կան 1.200 հոգի հետևակ, 20 հոգի հեծեալ զօրք և մի ռմբաձիգ գունդ, բայց այդ զօրքերի մի մասը հաւանական է, որ շուտով ետ կոչուի, որովհետև զինուորական խորհուրդն արդէն վերջացրել է իւր նիստերը. Եօզդատում անդորրութիւն է տիրում. ինչպէս և Աբեսարիայում և բոլոր միւս շրջաններում, ուր վերջերս յուզումներ և անկարգութիւններ էին տեղի ունենում։ Թիւրք-անգլիական յարաբերութիւնները կարծես թէ փոքր ինչ լաւացել են այն խօսակցութիւնից յետոյ, որ սուլթանն ունեցաւ անգլիական դեսպանի հետ պալատում եղած հանդիսաւոր ճաշից յետոյ։ Ասում են, որ սուլթանը խիստ գոհ է մնացել անգլիական դեսպանի՝ հայոց գործերին վերաբերուելուց և մինչև անգամ ցանկութիւն է յայտնել Վիկտորիա թագուհուն արաբական ձիեր ուղարկելու իբրև նուէր։

Արտօնատէր-Հրատարակիչ՝ Անդրէաս Բէկնազարեանց։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԹԻՒ
1794 ՀԱՐԻՒՐԱՄԵԱՑ 1894
ՅՈՒԲԵԼԻՆԻ ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ
„ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ“
ԼՐԱԳՐԻ
ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԱՆԷ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ
1894 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1-ԻՆ

Մեծ միաձայն դիրքով ԼՈՒՍԱՏԻՊ (phototypique) պատկեր մը, որուն մեծութիւնն է՝ 50—35 սանտիմետր, տպուած 70—45 սանտիմետր քարտոնի (carton) վրայ այլեւայլ բնագրով։ Պատկերս պիտի նկարագրէ՝ մէջտեղը հայ լրագրութեան Հիմնադրին՝ Տ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔՀՆԵՑ. ՇՄԱՒՈՆԵԱՆԻՆ պատկերը, եւ բոլորտիքը 1894-ին հայերէն լեզուաւ հրատարակուող բոլոր ԼՐԱԳԻՐՆԵՐԸ, իրենց ԽՄԲԱԳՐԱՊԵՏՆԵՐՈՒ պատկերներով։

„1794 ՀԱՐԻՒՐԱՄԵԱՑ ՅՈՒԲԵԼԵԱՆ ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ 1894“

պատկերը կարելի է ստանալ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՄԲ։ Մէկ օրինակի բաժանորդագինը է ՐՈՒԲԼԻ 1.—կամ 6 դրամ։ ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍԸ խմբագրութեանս վրայ է։

Պարսկաստանից պէտք է դիմել ուղղակի «ՇԱՒԻՂԻ» ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ, տալով նաեւ հասցէն որոշ գրուած, առանց ենթադրելու մեզի ծանօթ լինելն։ Կարելի է նաեւ բաժանորդագրուիլ մեր Յարգոյ Գործակալաց ձեռօք։

Ծանօթ. Բաժանորդագրութիւնը շարունակւում է Պարսկաստանում մինչեւ Օգոստոսի մէկը։